№ 148 Օգոստոսի 12 (24) 1881 Օգոստոսի 12 (24) № 148

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ոտարարագրարացիր գիտում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
խրատանչիր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Երեւանից։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Հայաստանի ժողովուրդը ինչ կը կարօտի։ Անգլիա։ Գլադստոնի ճառը։ Շահաւէտ առաջարկութիւն։ Նամակ Աւստրիայից։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Յուլիսի 28

Երեւանի արեւելեան կողմն է ընկնում Նորգ ասված քաղաքամասը, որն աւելի գիւղ է, քան թէ քաղաք։ Քաղաքի կենդրոնից հեռու է Նորգը երեք վերստաչափ, իսկ քաղաքից դէպի հիւսիս գնացող մեծ խճուղիի գլխից՝ մէկ և կէս վերստաչափ։ Նորգի դիրքը համեմատած քաղաքի դրքի հետ, կարելի է մօտ 400 ֆուտ աւելի բարձր համարել Նորգինը։ Այս պատճառով շատ մեծ զանազանութիւն կայ օդի բարեխառնութեան մէջ, երբ որ քաղաքի պարտէզներում կիլասը, ալոճը, ծիրանը և վարունգը հասած են և ուտելի, Նորգում դրանք բոլորովին դեռ խակ են լինում։ Յունիս, յուլիս և օգոստոս ամիսներին քաղաքի օդը թէ ցերեկը և թէ գիշերը խաչում, խեղդում է մարդկանց, այն ինչ Նորգում ցերեկը մի թեթեւութիւն է զգում մարդ բաց օդում, իսկ երեկոները և գիշերները գրեթէ գարնանային զով է զգում։— Բացի մաքուր օդից, Նորգի ջուրն էլ աւելի մաքուր է քան թէ քաղաքինը։ Քաղաքի երեխաների հարիւրից տասի թուլերը կարմիր ու թարմ չեն, ընդհակառակը՝ Նորգում դալուկ թշերով երեխայ հազիւ էք տեսնում. բոլորն էլ համարեա թարմ, կայտառ, զուարթ, քաջառողջ, կարմրաթշիկ, ընդունակ երեխաներ են։ Այս բոլորի պատճառը՝ ջուրն ու օդն է, որոնցից զուրկ է քաղաքը։ Զը նայելով Նորգի տների անճաշակ, անկարգ ու անյարմար շինուածքին, չը նայելով փողոցների, ճամբաների նեղլիկ, ծուռ ու մուռ, աղբոտ և քարուքանդ լինելուն, չը նայելով մեծ մասով բացօդեայ արտաքնոցներին և տեղ-տեղ դիզուած աղբիւրներին, այնու ամենայնիւ Նորգեցիք աւելի առողջ, աւելի ժիր և աւելի առատածնունդ են, քան թէ քաղաքի բնակիչները։— Նորգը բաղկացած է 170 տուն զուտ հայ ժողովրդից։ Դրանք ունեն մի բաւականին գեղեցիկ եկեղեցի, կոփածոյ քարից շինած, թաղի մէջ տեղում, որի բակի հարաւային կողմում տղայոց՝ իսկ հիւսիսային կողմում աղջկանց ծիսական դպրոցներ են, որոնք բաւականին լաւ են թէ նիւթական թէ ուսման կողմից, թէպէտ և տակաւին շատ բան է պակաս, կանոնաւոր ծխական դպրոց լինելու համար։ Թաղն ունեցել է միշտ երկու քահանայ. այժմ մէկը վախճանած է և մինն է ժողովրդի հոգևոր պիտոյքը հոգում և մի և նոյն ժամանակ՝ տաս տարուց աւելի է, ուսուցչի պաշտօն է վարում յիշեալ դպրոցների մէջ։ Ժողովուրդը սիրում է այս երիտասարդ քահանային, իր ուսուցչական և քահանայական պաշտօնների մէջ ըստ բաւականին ժիր և անշահասէր լինելու համար. բայց ափսոս որ վերջին օրերումս, «Պսակ» լրագրի մէջ, սրա մասին մի շատ չափազանցացրած գովասանական յօդուած երեւալու համար, հասկացող Նորգեցիներից ոմանց յարաբերութիւնը փոխվեցէ դէպի տէր-Վահան հայրը, որը գուցէ և մասնակից չէ յիշեալ փքված յօդուածի յօրինելուն։ Մենք կը յուսանք որ հ. Վահանը չի պակասցնի իր եռանդը դէպի դպրոցները, ուր, իրաւ որ, մեծ աշխատութիւն ունի։—Նորգեցիք այժմ որոնում են մի քահանայացու ևս։ Խորհուրդ կը տայինք մեր սիրելի Ներգեցիներին որ մի այնպիսին ճարէին, որ կարողանար իրանց դպրոցներում ուսուցիչ ևս լինել. իմ կարծիքով, այս ամենահարկաւոր և առաջին պայմանը պէտք է լինի ընտրութեան միջոցին։—Նորգեցոց մեծ մասը պարապում է այգեպանութիւնով և վարուցանքով, փոքր մասը պարապում է արհեստներով և վաճառականութիւնով, որոց խանութները քաղաքումն են։ Բոլոր Նորգեցիները, և զլխաւորապէս, վաճառականներն ու արհեստաւորները (նաև քաղաքի դպրոցները գնացող մանուկները), որք ստիպուած են առաւօտները իջնել քաղաք և իրիկնապահին վերադառնալ իրանց տները, զարհուրելի չարչարանք են կրում ճամբի $1^1/_2$ վերստ զառի վեր քարքարուտից։ Այդ անտանելի նեղլիկ, քարքարոտ և 3—400 ֆուտ քաղաքից վեր տանող ճանբան մաշում է անխնայ ոչ միայն Նորգեցոց կօշիկները, այլ և նրանց առողջութիւնը. և սարսափելի կերպով դժուարանում է յարաբերութիւնը քաղաքի հետ։ Նորգը մինչև 30—40 թուականները համարվում էր գիւղ։ Այդ ժամանակներում Նորգեցիք մօտ 400 բուբլի կաշառ կերցնելով նահանգական պաշտօնակատարներին՝ գրուեցին քաղաքի մատեանում. բայց դրանով բացի վնասից, օգուտ չը տեսան մինչև այսօր։ Սրանք զրկուելով իրանց յանգի ընդարձակ հողերից, որոնք միացան քաղաքի հողերի հետ, ընկան աւելի ծանր տուրքերի տակ և փոխարէնը ոչինչ չանեցան։ Այն օրերից մինչև այսօր Նորգեցիք քաղաքի մնդուկին վճարել են մօտ 60,000 բուբլի հարկ. այժմ իսկ վճարում են 2—3,000 բուբլի տարեկան տուրք կամ հարկ քաղաքային արկղին, բայց քաղաքը սրանց հինգ կոպէկի օգուտ չէ տալիս. ոստիկանութիւնը հակողութիւն չունի, գիշերապահները երբէք չեն շրջում Նորգում, քաղաքի հաշուով ոչ մի լապտեր չէ վառվում Նորգում. Նորգեցին հիւանդ մեռնելիս լինի չէ կարող 1, 2, 3 բուբլի այցի փող վճարելով, քաղաքային բժիշկ և մանկաբարձուհի բերել քաղաքից, այլ 6—10 բուբլի վճարելու է անուշտ. իսկ չքաւոր հիւանդները խօ միշտ մեռնում են առանց բժշկի ձայն լսելու։ Եւ ինչ էք կարծում, այդքան նեղութիւններից ազատվելու համար քաղաքն ինչքան ծախս պիտի անէ. 3 կամ շատը 4,000 բուբլի, որ Նորգեցոց 2 տարուայ տուրքն է քաղաքին։— Քանի որ քաղաքային վարչութիւնը չը կար, Նորգեցիք աղերսագրերով դիմում էին նահանգապետներին և միշտ լսում էին թէ «սպասեցէք, մնդկում փող չը կայ.» այժմ նոյն պատասխանն են լսում քաղաքային գործադիր վարչութիւնից. կարծում եմ այս հարցը դեռ ևս քաղաքային ընդհանուր խորհրդին էլ չէ առաջարկած, թէև խեղճ Նորգեցիք անդադար խնդրում են պ. քաղաքագլխին այս մասին։

Այժմ ընթերցողը զարմացած կը հարցնէ թէ ապա ինչ բարիքի համար են այդ ողորմելի մարդիկը մինչև հիմայ այդքան տուրքը վճարել քաղաքին և կամ հիմայ գոնէ կարելի չէր արդեօք դադարեցնել իրանց տուրքը մինչև նոյն տուրքով չինէին ճանապարհը. և ապա շարունակէին տալ քաղաքին։ Մենք կարծում ենք վերջինս պէտք է անել, ուրիշ յոյս չէ մնացել։ Եթէ այդ վերջինն էլ չը կարողանաք անել պ. պ. Նորգեցիք, այն ժամանակ պէտք է ինքներդ ձեր մէջ ստորագրութիւնով ժողովէք այդ չընչին գումարը և անպատճառ չինէք ճանապարհը. զբրանով ոչ միայն կաղատուէք յիշեալ զրկողութիւններից, այլ և ձեր տները, պարտէզները և և այգիները հիմիկուայ արժողութիւնից տասնապատիկ աւելի գին կարժենան։

Իսկ դուք պ. պ. քաղաքացիք, եթէ օգնէք Նորգի ճանապարհը բացելուն, դուք կունենաք մի շատ մօտիկ և շատ յարմարաւոր ամբարանոց Նորգում. դրանով էլ շատերդ կազատէք ձեզ և ձեր ընտանիքը քաղաքի թունաւոր օդից ու ջրից, ամառնային միջոցներում—Լսողին մէկ՝ չը լսողին հազար։

Այս տարուայ ծառապտուղները այնքան առատ են որ նոյն պտուղը ինչ որ անցեալ տարի վաճառվում էր լարով 1 բուբլ 20—40 կոպէկով, այժմ վաճառվում է միայն 20—30 կոպէկի, այգեպէրերից, այնինչ մրգավաճառները դարձեալ թանկ են վաճառում։ Ասում են որ խաղողը քիչ պակաս է և փոշին տեղ-տեղ տուել է, դրա համար լիտր 1 ր. 50 կ., վաճառվող գինին, այժմ ծախվում է 2—3 բուբլի։ Լաւաշ հացի ֆունտը 3 կոպ. բոքոնը 4 կ., ալիւարի մինը 7 կոպ. տաւարինը 8, և գառանը 6 կ. թէ և միշտ տակսիայից աւելի են ծախվում. ցորենի խալվարը (30 պուդ) 25—30—35 բուբլի, իւղի ֆունտը 35—40 կ. 4 ձուն 5 կոպ, վառեակը 30—40 կոպ. հաւը 50—60 կ., Նաւթը 9 կոպ. չաքարի պուդը 8 ր. 40 կ., արաղի լիտրը 4-ից բարձրացաւ 5 բուբ. 60 կ. վառելափայտ սաժէնը 35—40 բուբլ։ Ցների վարձը թանկ է։ Առուտուր չը կայ։

Նորայր

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս 9 օգոստոսի

«Մշակի» 79 համարի թղթակիցներիդ վերաբերեալ առաջնորդող յօդուածի առիթով ես ձեզ մի նամակ գրեցի Ղարաքիլիսից, յայտնելով միայն իմ լոկ կարծիքը որ եթէ լրագրութիւնը դադարի խօսել վարժապետների և հոգաբարձուների վրա, մեր դպրոցներն էլ առաջադիմութիւն չեն անի։ Դուք այդ մասնաւոր նամակը (ես երբէք ցանկութիւն չունէի այդ նամակի տպագրութեան) հարկաւոր համարեցիք հրատարակել առանց իմ ստորագրութեան։ Այժմ «Գիւղացի» ստորագրութեան տակ ծածկված մի պարոն «Մշակի» 146 համարում պատասխանում է այդ նամակին և զանազան կոպիտ հայհոյանքներով ճգնում է լուսի պէս ճշմարտութիւնը ոտի տակ դնել։— Ղարաքիլիսի ծծկեր երեխան էլ, կարդալով պ. Գիւղացու չողոքորթութեամբ շաղախուած նամակը, իսկոյն կը հասկանայ որ նա չունի իղձի փշրանք, նրա սրտի մէջ մեռել է ազնուութիւն։ Խարդախ նամակագրի վերջին և առաջին չար նպատակը այս է որ աշխատում է հոգաբարձուներին և ժողովրդին իմ դէմ գրգռել, ինքը լաւամարդ դառնալ և, որ գլխաւորն է իր ռոճիկը կամաց կամաց աւելացնել տալ։ Խեղճ Գիւղացի, մի կտոր ես հացի համար ստիպուած է հրապարակաւ սուտ խօսել, ճշմարտութիւնն ուրանալ, մարդկութիւնը ոտի տակ դնել։

«Մշակի» 109 համարի նամակի «անխիղճ, խաբեբայ, ազգի փողերը լափող, միամիտներին խաբող» բառերը երբէք չեն վերաբերում Ղարաքիլիսի դպրոցի գործիչներին, այլ՝ առնուած են ընդհանրապէս, առհասարակ։ Բայց պ. Գիւղացին իր կեղտոտ նպատակին հասնելու համար, չէ ուզում հասկանայ, դիտմամբ այդ խօսքերը մասնաւորում է իր վրա և խօսակցութեան առարկայ շինում։—Իսկ ինչ վերաբերում է «մի օր դպրոցը սնանկացած կը հրատարակուի» ասածս խօսքերին, այդ արդէն ինքս բացատրեցի «Մշակի» ներքին լուրերում. այդ մասին կրկին բացատրելը իմ կողմից աւելորդ է, իսկ Գիւղացու խօսելը չարամտութիւն։—Ես ասել էի թէ հոգաբարձութիւնը մօտ 20 տարի է (կրկնում եմ եթէ գիտենայի որ այդ նամակս պիտի տպագրուի, երբէք չէի գրի) հաշիւ չէ տուել հասարակութեան։ Այդ այժմ էլ կրկնում եմ որ մինչև Պռոշեանցի դալը հասարակութիւնից ոչ ոք չէր իմանում թէ իրանց դպրոցը որքան ծախք ունի, որքան մուտք, որքան ելք, որքան դրամագլուխ։— Գիւղացու ասելով հոգաբարձութիւնը միշտ հաշիւ է տուել հոգևոր իշխանութեանը։ Ես՝ հաւատալով նրա ասածին և հիմնուելով ժողովրդի պահանջի վրա, ասում եմ որ աւելի լաւ կը լինի եթէ 5 տարին մի անգամ էլ հասարակութիւնը հաւաքուի և նրանց մօտ կարդացուեն այդ հաշիւները։ Այս վերջին ձևը աւելի օգտակար է նրա համար որ ժողովուրդը՝ իմանալով որ իրանց տուած փողերը չատացել են և ծառայում են իրանց նպատակին, աւելի կը կրկնապատկէ իր սէրն և յարգանքը դէպի իր ազգային դպրոցը։—Գիւղացու խարդախ նամակից երեւում է որ ես թշնամի եմ հոգաբարձութեան և ամեն բան կրքով եմ գրում և որպէս թէ աշխատում եմ ամեն կերպ կոտրել հոգաբարձութեան վարկը և նորը ընտրել տալ։ Ինքն Գիւղացին էլ գիտէ որ այդ այդպէս չէ, բայց աշխատում է այդպէս ցոյց տալ։ Ես սիրել եմ այդ հոգաբարձութեան, և երբէք չեմ կամեցել դրանց հրաժարուիլը։ Այս խօսքերին կենդանի վկայ է պ. Պռոշեանցը, որ իր Ղարաքիլիսա եկած երկրորդ առաւօտ երբ կանչեց ինձ և առանձին խօսակցութիւն ունեցաւ նոր հոգաբարձու ընտրելու մասին, ես նրան փաստերով հասկացրի որ աւելորդ է այդ հարցը զարթեցնել։ Այս հասկացող երիտասարդներից շատերը պատրաստուել էին ժողովի մէջ զարթեցնել այդ հարցը, բայց ես նրանց էլ խնդրեցի, նրանց էլ համոզեցի որ թողնեն իրանց մտադրութիւնը։—Վերջին տարին հոգաբարձութիւնը բոլորովին ստիպեցաւ դանդաղանալ և դպրոցի պակասութիւնները թողնել երեսի վրա։ Լրագրութիւնը խօսեց այդ թուլութեան մասին, ի հարկէ սուրբ նպատակով, առաջն առնելու համար։ Բայց բանից դուրս եկաւ որ քանի զրվում է, այնքան պակասութիւնը շատանում է։ Մենք զարմանում էինք այդքան անտարբերութեան վրա, մինչև որ հոգաբարձուներից մէկը, նոյն իսկ Պռոշեանցի ներկայութեան, առանց կարմրելու արտասանեց հետեւեալ միտքը. «մենք մտադիր էինք շինելու այս և այն պակասութիւնները, բայց որ լրագրի մէջ գրեցին, մենք էլ ջկրու թողեցինք, և քանի շատ խօսեն, այնքան շատ կը յետանայ»։ Այս խօսքերից յետոյ մենք նոր խմացանք որ գլխներս քարով ենք տուել, յոնքը չինելու տեղ աչքը հանել ենք և վերջապէս բոլորովին ընդհակառակն ենք գործել։ Այդ բոպէից ուխտեցի և այստեղ էլ կրկնում եմ որ այսուհետև մի խօսք էլ չեմ ասի այդ դպրոցների գործիչների վրա։

Վերջացնելով ասելիքս, հաւաքում եմ պ. Գիւղացու կոպիտ հայհոյանքները և նոյնութեամբ վերադարձնում եմ իրան որպէս յաջհամբոյր։

Սարիբէգ Տէր-Մելքիսետեկեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Երեւան յուլիսի 23

Եթէ ես ասեմ, թէ Երեւանի հասարակութեան մէջ սկսել է զարգանալ մինչև անգամ էստետիքական զգացմունք, դուք դժուար կը հաւատաք ինձ։ Բայց փաստերը շատ համոզիչ են։ Առանց ընդհանուր դատողութիւնների ես կը բերեմ այստեղ միայն մի խոշոր, աչքի ընկնող օրինակ։

Քաղաքի լայն և մարդաշատ հրապարակներից մէկի վրա բարձրանում է մի օտարոտի շինութիւն, որ չլացնում է մարդու իր նորաձև ճարտարապետութեամբ։ Դեռ հեռուից գրաւում է մարդու ուշադրութիւնը նրա գլխին ծածանվող դրօշակը։ Ի՞նչ պէտք է լինի սա—մտածում է մարդ զարմանալով՝ թանդարան, հասարակական գրադարան, հիւրանոց թէ մի որ և է գործարան... Մօտենում ես մի փոքր ևս և առանց ուրիշի բացատրութիւնների հասկանում ես ամեն... Այդ դրօշակաւոր շինութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հասարակական արտաքնոց... Նրա մի կողմում ընկած է անգլիական պարտէզը, միւս կողմում հացի, մսի և այլ ուտելեղէնների խանութներ, իսկ չորս բոլորում—մրգի կրպակներ... Ինչ աքանչելի ներդաշնակութիւն. երեւանցին զբօսնում է պարտիզում, ուտելեղէններ է գնում, անցուդարձ է անում հրապարակով և իր հաստ քթին դիպչում է միշտ մի բարակ հոտ... Այդ մթթէ էստետիքական վայելչութիւն